ՊՕԵՏԻՆ

ՑՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Մեր ուշքն ինչու ես կախարդում
Սիրոյ անհոգ երգերով,
Մեր աչքն ինչու ես դու խաբում
Ցնորական պատկերով։

Այս օրերում հարկաւոր չեն
Զբօսանքներ հոգեկան,
Նայիր կեանքին, մեզ կանչում են
Մեր եղբայրներն օգնութեան։

Իսկ դու, անփոյթ մեր տանջանքին,
Հարուածներին մեր բաղտի,
Արբեցնում ես արթուն հոգին
Քաղցրը թոյնով հեշտախոհի։

Քո սիրային երգերի հետ,
Նայիր, սուգ ենք մենք անում։
Բաւական էր, կանգնիր պօէտ,
Կեանքի կռւի սահմանում։

Եւ տարածիր աչքդ անդէնք
Ընդէմ չարին մահաբեր,
Մենք էլ այնժամ քեզ հետ կասենք
«Մնաք բարեաւ, կոյս և սէր»։